**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՏԱՆՁՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Տանձուտ համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Տանձուտ, 098432032, tandzut.armavir@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

05 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2018թվականի N 123

## ԱՆՎՃԱՐ ԴԱՀԼԻՃՆԵՐ ԵՎ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի 19-րդ հոդվածի երկրորդ մասով, Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովի 2018 թվականի ապրիլի 9-ի N6-Ն որոշմամբ, 2018 թվականի դեկտեմբերի 9-ին կայանալիք Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի արտահերթ ընտրություններին նախընտրական ժողովներ, թեկնածուների հետ ընտրողների հանդիպումներ և ընտրությունների հետ կապված այլ միջոցառումներ կազմակերպելու նպատակով.

*որոշում եմ*

1. Սահմանված կարգով և ժամկետներում տրամադրել անվճար դահլիճ՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԽԻԹԱՐ ՊԵՏՐՈՍՅԱՆ**

20 18թ.
գ.Տանձուտ

Հավելված
Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Տանձուտ համայնքի ղեկավարի
2018 թվականի նոյեմբերի 5-ի
N 123-Ա որոշման

## Ց Ա Ն Կ

**2018 թվականի դեկտեմբերի 9-ին կայանալիք Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի արտահերթ ընտրություններին մասնակցող կուսակցություններին, կուսակցությունների դաշինքներին անվճար հիմունքներով տրամադրվող դահլիճների**

**Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Տանձուտ համայնք**

| Հ/Հ | Դահլիճի, շինության անվանումը | Գտնվելու վայրը (հասցեն) | Նստատեղերի թիվը | Տրամադրելու օրերը և ժամերը | Դահլիճը, շինությունը տնօրինող | Այլ նշումներ |
|---|---|---|---|---|---|---|
| 1: | Տանձուտի մշակույթի տան դահլիճ | Արմավիրի մարզ գ. Տանձուտ, 1 փողոց 18/1 շենք: | 130 | 1 օրը ժամը 11:00-ից 17:00<br>2 օրը ժամը 11:00-ից 18:00<br>3օր ժամը 11:00-ից 18:00<br>4օր ժամը 11:00-ից 18:00<br>5օր ժամը 11:00-ից 18:00 | Տանձուտի մշակույթի տան տնօրեն Հրաչյա Մինասյան | Համայնքում գոյություն չունեն նախընտրական քարոզչության անցկացման համար համապատասխան այլ դահլիճներ |

Աշխատակազմի քարտուղար ` Գ. Խուրշուդյան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՏԱՆՁՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Տանձուտ համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Տանձուտ, 098432032, tandzut.armavir@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

22 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2018թվականի N 129

ԻՐԱՎՈՒՆՔ ՀԱՍՏԱՏՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ ՉՊԱՀՊԱՆՎԱԾ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ՇԵՆՔ_ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Արմավիրի մարզի Տանձուտ համայնքի բնակիչ Վրեժ Գրիգորյանի `ծնված 1958 թվականին` ,դիմել է Տանձուտ համայնքի 13 փողոց թիվ 19 հասցեում գտնվող սեփականության իրավունքով պատկանող 0,1198հա օրինական տնամերձ հողամասի վրա կառուցված բնակելի տուն և շենք -շինությունների վերականգնելու խնդրանքով , որը օրենքի ուժով կարող է փոխանցվել անհատույց սեփականության իրավունքով:

Հաշվի առնելով որ,կառույցը իրականացվել է մինչև 1985 թ, և դրա պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները ու օրենքով պահպանվող շահերը, կառուցված չէ քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, հողամասը համապատասխանում է ՀՀ հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ կետի 1.2.3 ենթակետերով սիմանված պահանջներին և ընդգրկված չէ նույն օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված սահմանափակումների ցանկում, ղեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 8-րդ կետով, ՀՀ Կառավարության 18.05.2006թ թիվ 912-Ն որոշման կարգով և սույն որոշման 22-րդ կետի 1-ին ենթակետով,«Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 17-րդ կետով,«Հայաստանի Հանրապետության համայնքների վարչական տարածքներում իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով:

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1.Վերականգնելով Արմավիրի մարզի Տանձուտ համայնքի 13 փողոց թիվ 19 հասցեում գտնվող գույքային միավորի՝ Վրեժ Գրիգորյանի ծնված 1958 թվականին գույքային իրավունքները ճանաչելով նրա սեփականության իրավունքը 0,1198 հա օրինական տնամերձի վրա գտնվող բնակելի տան և շենք շինությունների նկատմամբ կառուցված 1985թվականին՝ բնակելի տուն

151.9քմ, նկուղ տարածք 20.7 քմ, ծածկ 38,0ք.մ, թոնրատուն 12,6 քմ, հավաբուն 26,3 և անասնաշենք 21,6ք.մ. :

2. Առաջարկել ՀՀ ԿԱ ԱԳԿ ՊԿ համապատասխան ստորաբաժանմանը գրանցել Վրեժ Գրիգորյանի՝ ծնված 1958 թվականին, սեփականության իրավունքը սույն որոշման 1-ին կետում նշված բնակելի տան և շենք շինությունների նկատմամբ տրամադրել անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման վկայական:

3.Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԽԻԹԱՐ ՊԵՏՐՈՍՅԱՆ

2018թ.
գ.Տանձուտ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՏԱՆՁՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Տանձուտ համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Տանձուտ, 098432032, tandzut.armavir@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

21 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2018թվականի N 128

### ՕՐԻՆԱԿԱՆ ՏՆԱՄԵՐՁ ՀՈՂԱՄԱՍԻՆ ԿԻՑ ԱՎԵԼ ԶԲԱՂԵՑՐԱԾ ՀՈՂԱՄԱՍԻ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱՏՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Տանձուտ համայնքի բնակիչ ՝ Վրեժ Գրիգորյանին հատկացվել է 0.10 հա տնամերձ հողամաս: Քարտեզագրման և գույքագրման ժամանակ տնամերձի փաստացի մակերսը կազմել է 0.1198 հա :Տնամերձին կից ավել զբաղեցրած 0.0198 հա հողը չի գտնվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված հողամասերի ցանկում ,չի խախտում անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք և ղեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ կետով,ՏԻՄ -ի ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի 32-րդ և հիմք ընդունելով Վրեժ Գրիգորյանի դիմումը

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1.Օրինական տնամերձին կից ավել զբաղեցրած 0.0198 հա հողը սեփականության իրավունքով անհատույց տրամադրել Վրեժ Գրիգորյանին ծածկագիր 04-092-032-014:

2. Առաջարկել ՀՀ ԿԱ ԱԳԿ ՊԿ համապատասխան ստորաբաժանմաը գրանցել Վրեժ Գրիգորյանի՝ ծնված 1958 թվականին,Սեդա Թորոսյանի 1962թ.,Սաթենիկ գրիգորյանի 1983թ.,Հենրիկ Գրիգորյանի 1985թ.,Արամ Գրիգորյանի 1987թ. սեփականության իրավունքը սույն որոշման 1-ին կետում նշված հողի նկատմամբ տրամադրել անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման վկայական:

3.Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԽԻԹԱՐ ՊԵՏՐՈՍՅԱՆ

2018 թ.
գ.Տանձուտ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՏԱՆՁՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Տանձուտ համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Տանձուտ, 098432032, tandzut.armavir@mta.gov.am

### Ո Ր Ո Շ ՈՒ Մ

19 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2018թվականի N 127

ՎԼԱԴԻԿ ԽՈՒԴՈՅԱՆԻՆ ՀԱՍՑԵԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 16-րդ կետով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2005թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 48-րդ կետով, հիմք ընդունելով համայնքի ավագանու 2006թվականի օգոստոսի 18-ի թիվ 2 որոշումը և Վլադիկ Խուդոյանին 2018թ. նոյեմբերի 19-ի դիմումը

Որոշում եմ՝

1. Արմավիրի մարզի Տանձուտ համայնքի բնակիչ Վլադիկ Խուդոյանին պատկանող տնամերձ հողամասին բնակելի տնով /ծածկագիր 04-092-022-011/ տալ հասցե Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Տանձուտ համայնք 2 փողոց 4 տուն հասցե:

2.Սույն որոշումը ներկայացնել անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Արմավիրի մարզային ստորաբաժանում ՝ պետական գրանցման համար:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԽԻԹԱՐ ՊԵՏՐՈՍՅԱՆ

2018 թ.
գ.Տանձուտ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՏԱՆՁՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Տանձուտ համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Տանձուտ, 098432032, tandzut.armavir@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

19 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2018թվականի N 126

### ԱՆՆԱ ՇԱՀԲԱԶՅԱՆԻ ԵՐԵԽԱՅԻ ԾՆՆԴԻ ԽՐԱԽՈՒՍՈՒՄ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 42-րդ կետով, հիմք ընդունելով համայնքի ավագանու 2018 թվականի փետրվարի 23-ի N 4 որոշումը, Անգելինա Շահբազյանի ծննդյան վկայականը և Աննա Շահբազյանի 2018 թվականի նոյեմբերի 15-ի դիմումը

Որոշում եմ

1. Տանձուտ համայնքի բնակիչ Աննա Շահբազյանին առաջին երեխայի ծննդի հետ կապված կիրառել խրախուսանք՝ 20000 (քսան հազար) Հայաստանի Հանրապետության դրամ:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԽԻԹԱՐ ՊԵՏՐՈՍՅԱՆ

2018թ.
գ.Տանձուտ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՏԱՆՁՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Տանձուտ համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Տանձուտ, 098432032, tandzut.armavir@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

14 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2018թվականի N 125

ՄՈՒՇԵՂ ՄԻՔԱՅԵԼՅԱՆԻՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ԱՆՁ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 24-րդ կետով և հաշվի առնելով ջեռուցման սեզոնի սկսվելը

Որոշում եմ՝

1.Տանձուտի համայնքի ղեկավարի տեղակալ Մուշեղ Միքայելյանին նշանակել գազի տեխնիկական շահագործման պատասխանատու անձ:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԽԻԹԱՐ ՊԵՏՐՈՍՅԱՆ

2018թ.
գ.Տանձուտ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՏԱՆՁՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Տանձուտ համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Տանձուտ, 098432032, tandzut.armavir@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

09 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2018թվականի N 124

## ՀՈՂԱՄԱՍԸ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ ՄԻՋՈՑՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածով, <<Տեղական ինքնակառավարման մասին >>Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի ,3-րդ և 4-րդ կետերով , հիմք ընդունելով համյնքի բնակիչ Ջամալ Ֆերոյանի դիմումը

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1.Տանձուտ համայնքի 1-ին փողոց թիվ 42/3 հասցեում գտնվող Ջամալ Ֆերոյանին կառուցապատման իրավունքով տրամադրված՝ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածի սահմանափակումների տակ չգտնվող 5356 քմ հողամասը ուղղակի վաճառք ձևով օտարել (վաճառել) Ջամալ Ֆերոյանին:

2.Հիմք ընդունելով հողային օրենսգրքի 66-րդ հոդվածի և Հայաստանի Հանրապետության կառավարության 24 դեկտեմբերի 2003 թվականի N1746-Ն որոշումը Ջամալ Ֆերոյանից գանձել 528*0.6*5356=1696781 ՀՀ դրամ.

3.Տեղեկացնել հողօգտագործողին ,որ սույն որոշումը ուժի մեջ է մտնում կայացման օրվանից 15-օրյա ժամկետում; Հողամասի կադաստրային արժեքը 1696781 ՀՀ դրամը պետական բյուջե 900005001475 հաշվեհամարին վճարելու պահից:

4.Ընդունել ի գիտություն ,որ հողամասի առուվաճառքի պայմանագիրը ենթակա է նոտարական վավերացման , իսկ դրանից ծագող իրավունքները պետական ռեգիստրի համապատասխան ստորաբաժանումում:

5.Որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Տանձուտ Համայնքի ղեկավարի , դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում, կամ դատական կարգով ՀՀ վարչական դատարան երկամսյա ժամկետում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԽԻԹԱՐ ՊԵՏՐՈՍՅԱՆ

2018 թ.
գ.Տանձուտ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՏԱՆՁՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Տանձուտ համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Տանձուտ, 098432032, tandzut.armavir@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

05 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2018թվականի N 122

## ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԱՆՎՃԱՐ ՔԱՐՈԶՉԱԿԱՆ ՊԱՍՏԱՌՆԵՐ ՓԱԿՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՏԵՂ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Ընտրական Օրենսգրքի Հայաստանի Հանրապետության օրենքի 21-րդ հոդվածի 3-րդ կետով

Որոշում եմ՝

1.2018 թվականի դեկտեմբերի 9-ին կայանալիք Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի ընտրությունների քարոզչության համար, անվճար քարոզչական պաստառներ փակցնելու համար տեղ հատկացնել՝ 20 քմ համայնքի գրասայգու հարող տարածքում:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԽԻԹԱՐ ՊԵՏՐՈՍՅԱՆ

2018 թ.
գ.Տանձուտ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՏԱՆՁՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Տանձուտ համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Տանձուտ, 098432032, tandzut.armavir@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ու Մ

05 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2018թվականի N 121

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆԱՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԱՐՏԱՀԵՐԹ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՏԱՆՁՈՒՏ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՏԵՂԱՄԱՍԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի 16-րդ հոդվածի 1-ին մասով և <<Տեղական ինքնակառավարման մասին >> Հայաստանի Հանարապետության օրենքի 32-րդ հոդվածի 17-րդ կետով

Որոշում եմ՝

1.2018 թվականի դեկտեմբերի 9-ին կայանալիք Հայաստանի Հանրապետության ազգային ժողովի արտահերթ ընտրությունների անցկացման համար տեղամասային կենտրոն սահմանել Տանձուտ համայնքի մշակույթի տան շենքը՝ 1 փողոց 18/1 շենք:

2.Տարածքի տիրապետող ճանաչել մշակույթի տան տնօրեն՝ Հրաչյա Մինասյանին:

3.Սույն որոշումը մեկական օրինակ ուղարկել լիազոր մարմնին, թիվ 15 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովին և տարածքը տիրապետողին:

4.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԽԻԹԱՐ ՊԵՏՐՈՍՅԱՆ

20 18թ.
գ.Տանձուտ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՏԱՆՁՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Տանձուտ համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Տանձուտ, 098432032, tandzut.armavir@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

02 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2018թվականի N 120

### ՏԱՆՁՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ ՎԵՐԱԲԱՇԽՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի33-րդ հոդվածի 3-րդ մասով,հիմք ընդունելով Տանձուտ համայնքի ավագանու 2017 թվականի դեկտեմբերի 22-ի N56-Ն որոշումը

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1.Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Տանձուտ համայնքի ֆոնդային բյուջեի ծախսային մասում կատարել վերաբաշխում;

1)Բաժին 08/2 3 5113 հոդվածից 450.0 հազր դրամ տեղափոխել բաժին 06/3 1 5113 հոդվածին:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԽԻԹԱՐ ՊԵՏՐՈՍՅԱՆ**

2018 թ.
գ.Տանձուտ